10558

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«19» 09 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 222 - 25

Նախաձեռնող՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
Ք. Երևան, Չարենցի փ. 1

Գործունեությունը՝ ***Բերդ համայնքի Նորաշեն բնակավայրում կրթահամալիրի կառուցում***
Տավուշի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 222 - 25

«19» սեպտեմբերի 2025թ.

Նորաշեն բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /այսուհետ՝ ՇՄԱԳ/, նախագիծ
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Բերդ համայնք, Նորաշեն բնակավայր

Ներածական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում է Նորաշեն բնակավայրում իրականացնել կրթահամալիրի կառուցման աշխատանքներ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով՝ 11-048-0045-0014 ծածկագիրով ամրագրված 0.6664 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կրթահամալիրի տարածքը ծանրաբեռնված է քանդման ենթակա շինություններով, կառուցվելու է հին դպրոցի հողամասի սահմաններում: Ռելիեֆը հարթ ունի թեքություն, բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1199.0-1201.0 մմ սահմաններում: Տարածքում կան թվով 37 հատ ծառեր, որից 23 նախատեսվում է հատել:

Հիդրոերկրաբանական տեսակետից 10 մ խորության վրա ստորգետնյա ջրեր չեն հայտնաբերվել:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները, ինչպես նաև զգայուն էկոհամակարգերը, բույսերի և կենդանիների հազվագյուտ և Կարմիր գրքերի տեսակները:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 6664 մ^2,
- կառուցապատման մակերեսը՝ 3167,6 մ^2, 47,53 %
- կանաչապատման մակերեսը՝ 1401,60 մ^2, 21.03 %,
- բարեկարգման մակերեսը՝ 2094.80 մ^2:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO OF THE RA MINISTRY OF ENVIRONMENT
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Համաձայն նախագծի՝ կրթահամալիրն իրենից ներկայացնում է երեք իրար կպած 200 աշակերտի համար նախատեսված երկհարկանի հիմնական դպրոց, մեկ հարկանի սպորտդահլրիճ և 40 սանի համար նախատեսված մանկապարտեզ: Դպրոցը նախատեսված է 1-ից մինչև 12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով, նախատեսված են դասասենյակներ, ներառական կրթության սենյակ, տարրական դպրոցի մարզասրահ-խաղասենյակը, կենսաբանության և քիմիայի կաբինետները՝ օդաքաշ պահարաններով լաբորատորիաներով, ռազմագիտության կաբինետ, հանդիսությունների դահլիճը՝ հանդերձարաններով, տնօրենի աշխատասենյակ, ուսուցչանոց, բժշկի սենյակը, տղաների, աղջիկների և հաշմանդամների համար նախատեսված սանհանգույցները և այլն: Դասարանները նախատեսված են 12 աշակերտի համար:

Մանկապարտեզի մասնաշենքը միջանցքով կապված է դպրոցական մասնաշենքի հետ: Մանկապարտեզում նախատեսված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, և ննջարաններ երեխաների համար, ինչպես նաև վարիչի, բժշկի սենյակը մեկուսարանով և դայակների սենյակները: Սակավաշարժուն խմբի երեխաների համար նախատեսված է վերելակ:

Կրթահամալիրի տանիքը լինելու է պողպատե ծածկով, հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Հիմնական դպրոցի մասնաշենքում նախատեսված է նկուղային հարկ, ինչը կարող է ծառայել որպես ժամանակավոր թաքստոց: Նկուղային հարկում բացի նկուղային սրահ-տարածքից տեղակայված են սանհանգույց և օժանդակ սենքեր: Կրթահամալիրի ջերմամատակարարման նպատակով նկուղային հարկում նախատեսվում է նաև տեղադրել 120 կՎտ ջերմային հզորությամբ՝ -15°C ռեժիմի համար նախատեսված էլեկտրական երկու կաթսա:

Կրթահամալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Կրթահամալիրի մուտքերը կահավորված են լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Նախագծով նախատեսվում է 149.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում, որի տարածքը կտրամադրվի համայնքի կողմից: ՖՎ վահանակները տեղակայվելու են գրունտային մակերևույթին՝ դեպի հարավ ուղղորդված, 30° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 272 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Կրթահամալիրի էլեկտրամատակարարումը և էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Քանի որ կրթահամալիրը կառուցվելու է հին դպրոցի տարածքում, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման գծերը շահագործման ընթացքում նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին: Շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից, տեղադրելով առանձին հաշվիչ: Ժամանակավոր էլեկտրամատակարարումն իրականացվելու է հին դպրոցի տարածքից:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկռունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Խմելու որակի ջուրը կմատակարարվի գոյություն ունեցող դպրոցի գործող ջրագծից: Ջրցանի և անիվների լվացման համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Ընդամենը ջրօգտագործումը ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (49 մարդ), ջրցանի և անիվների լվացման համար կկազմի 7002.55 մ^3/շին.ժամ: Շինարարական հրապարակին կից նախատեսվում է տեղադրել պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և բետոնաջրերը: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ փոքր քանակներով տիղմը մնացած շինաղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Գործունեության ընթացքում քանդման աշխատանքներն իրականացվելու են մեխանիկական եղանակով՝ ապամոնտաժվելու են բոլոր շինությունները: Ապամոնտաժվող շենքերը, հիմնականում, քարե կոնստրուկցիաներով շինություններ են, մետաղաթիթեղյա ծածկով: Սկզբում կիրականացվեն դպրոցի շենքի տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամոնտաժումը: Քանդման ընթացքում առաջացած թափոնները տեղափոխվելու են Բերդի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում ենթադրում են հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար հանվող հողային զանգվածից մի մասը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած հողային զանգվածը կհեռացվի Բերդի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր: Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայութուն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային կեղտաջրերը ատրաքին ցանցի միջոցով հեռացվելու են դեպի Տոպս-100 մաքրման կայան: Կենսաբանական մաքրման ենթարկված կեղտաջրերը, նվազեցնելով իրենց բակտերիալ աղտոտվածությունը կուղորդվեն կուտակիչ հոր և կօգտագործվեն ոռոգման համար: Ավելցուկային ջրերը կհեռացվեն դրենաժի միջոցով:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն համաձայն Բերդ համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի: Տնկվելու են նոր ծառեր. թղկի սրատերեվ կարմիր՝ 7, գնդաձև իլենի՝ 35, սյունաձև տույա՝ 15 սիզամարգ՝ 1401,60 մ^2:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ պարբերաբար, տարվա շոգ և չոր եղանակներին օրական 2-3 անգամ,
- փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար,
- մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կենսաբազմազանության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Տավուշի մարզի Նորաշեն բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացն իրականացվել է բնապահպանական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Փորձաքննության գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, տարբեր գերատեսչություններ, Տավուշի մարզպետարանը, Բերդի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակումներում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Տավուշի մարզի Նորաշեն բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ: Շահագործման փուլում ծառերի և բուսականության խնամքը կիրականացվի կրթահամալիրի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի, արտակարգ իրավիճակների, տեխնիկական և աշխատանքի անվտանգության նորմերի պահանջներին:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի պահպանման համար:

- Շահագործման ընթացքում ապահովվել կրթահամալիրի կանաչ տարածքների խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ - ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Բերդ համայնքի Նորաշեն բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան